# ԲԱԺԻՆ 3. ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ, ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԸ

ՀԴՏ 61.130.58 DOI: 10.53068/25792997-2025.1.14-143

## ԾԽԱԽՈՏԱՄՈԼՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՖԿՍՊԻ-Ի ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ

*Վ. Ա. Աբովյան, Գ. Լ. Նալբանդյան,*
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

**Առանցքային բառեր:** Ոչ վարակիչ հիվանդություններ, ծխախոտամոլություն, պասիվ ծխողներ, ծխող ուսանողներ, էլեկտրոնային ծխախոտներ, ծխելը սկսելու տարիք:

**Հետազոտության արդիականությունը:** Ծխախոտն ամեն տարի սպանում է ավելի քան 8 միլիոն մարդու, այդ թվում՝ մոտ 1,3 միլիոն չծխողների, որոնք ենթարկվում են երկրորդային ծխի ազդեցությանը [14]: Աշխարհի 1,3 միլիարդ ծխախոտ օգտագործողների մոտ 80%-ն ապրում է ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում և ամեն տարի մինչև 70 տարեկան 17 միլիոն մարդ մահանում է ոչ վարակիչ հիվանդություններից (ՈՎՀ): Այս վաղաժամ մահերի 86%-ը տեղի է ունենում ցածր և միջին եկամուտ ունեցող երկրներում [15]: 2020 թվականին աշխարհի բնակչության 22,3%-ն օգտագործել է ծխախոտ՝ տղամարդկանց 36,7%-ը և կանանց 7,8%-ը: Հայաստանում 2022-ին ծխող տղամարդիկ կազմել են 53.2%, որը 2016-ի համեմատ չի փոխվել՝ 53.4%: Նույնը վերաբերվում է նաև կանանց՝ 2022 և 2016 թվականներին ամեն օր ծխող կանանց քանակը կազմել է համապատասխանաբար՝ 2.0% և 2.3%:[2]

Չնայած այն հանգամանքին, որ նիկոտինի օգտագործման էլեկտրոնային համակարգերի օգտագործումը, ներառյալ էլեկտրոնային ծխախոտները, վեյփ գրիչները, նարգիլեին և էլեկտրոնային սիգարները, մեծ տարածում են գտել ամբողջ աշխարհում, հատկապես երիտասարդների շրջանում, այնուամենայնիվ նրանց ներկայիս տարածվածությունը կազմում էր 10.2%, տարբեր մայրցամաքներում նկատելի տատանումներով: Հայաստանում ևս առկա է այս միտումը, սակայն այն դեռևս մեծ տարածում չի գտել և ամեն օր ծխողների 96.5%-ն օգտագործում է ֆիլտրով սիգարետներ [2,9]:

«Գլոբալ առողջություն-2050-ը»՝ առողջապահության մեջ ներդրումներ կատարելու մասին Lancet հանձնաժողովի երրորդ զեկույցը, եզրակացնում է, որ այն երկրները, որոնք կընտրեն ներդրումներ անել, կարող են հասնել «50-ից 50»-ի նպատակին՝ վաղաժամ մահերը, այսինքն՝ մինչև 70 տարեկան մահերը մինչև 2050թ. 50%-ով նվազեցնելու հավանականության: Զեկույցում նշվում է, որ «50-ից 50»-ի նպատակին կարելի է հասնել՝ կենտրոնանալով 15 առաջնահերթ խնդիրների վրա, որոնցից ութը վերաբերում են վարակիչ հիվանդություններին և մայրական առողջությանը, իսկ յոթը՝ ոչ վարակիչ հիվանդություններին և վնասվածքներին: Առողջության այդ 15 հիմնական սպառնալիքները հանգեցնում են վաղաժամ մահերի ամբողջ աշխարհում, իսկ ծխախոտի օգտագործումը առաջատար դիրք է գրավում այդ ցանկում, նշել է Առողջության մեջ ներդրումների Lancet հանձնաժողովը [10]:

Չնայած ծխելու տարածվածությունը 1990 թվականից ի վեր զգալիորեն նվազել է 15 տարեկանից մեծ և՛ տղամարդկանց (27,5% կրճատում), և՛ կանանց (37,7% կրճատում) շրջանում, սակայն նվազման տեմպերը դանդաղել են և ներկայում յուրաքանչյուր տասը ծխողներից վեցը կամ աշխարհում 750 միլիոն մարդ ցանկանում է թողնել ծխախոտը [10,11]:

Հայաստանում ևս հակածխախոտային մեծ ակտիվություն դրսևորվեց 2000 թվականի սկզբից: 2004թ. դեկտեմբերի 24-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման մասին» ՀՀ օրենքը, [7], իսկ հունիսից ակտիվ հակածխախոտային գործունեություն էր ծավալել «Հայաստանն առանց ծխախոտի» հասարակական կազմակերպությունների (ՀԿ) դաշինքը, 2006 թվականից ՀԿ–ների կողմից իրականացվող հակածխախոտային ծրագրերը սկսվեց ֆինանսավորվել ՀՀ բյուջեից[6]: Ըստ Մարդկային զարգացման ազգային զեկույցի (UNDP, Հայաստան - 2001)՝ ՀՀ–ում մեծահասակ տղամարդ բնակչության 68,8%-ը և կանանց 6.7%–ն օրական ծխում էր 15-16 ծխախոտ: 2004–ին Երևանի դպրոցների բարձր դասարաններում իրականացված հետազոտության համաձայն՝ ծխում էր մասնակիցների 28,43%–ը: Այս ակտիվության արդյունքում 2007թ. ամեն օր ծխախոտ օգտագործողների տարածվածությունը նվազեց տղամարդկանց շրջանում մինչև 54.6 %, իսկ կանանց շրջանում՝ 1.6 % [6,3]

Վերջին երկու տասնամյակում ուսանողության շրջանում ծխախոտամոլությունն էական փոփոխություններ չի

կրել, չնայած առանձին դեպքերում առկա են դրական տեղաշարժեր: Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի մագիստրոսների շրջանում 2023թ.-ին ծխախոտ ծխելու տարածվածությունը կազմել է 24.1% (տղաներ՝ 31.4 %, աղջիկներ՝ 10.3%) [1]: 2005-2006 թվականներին Երևանի պետական բժշկական համալսարանի ուսանողների շրջանում իրականացված հետազոտությունների համաձայն՝ մի դեպքում ծխող տղաները և աղջիկները համապատասխանաբար կազմել են 44,9% և 3,4%, իսկ մեկ այլ դեպքում՝ 47,7% և 14,5%: Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում 2007թ. իրականացված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ ծխում է ուսանողության 16%, ընդ որում՝ ծխում է տղաների 26,8 % և աղջիկների 9,3% [4,5,8]: Հետազոտությունները փաստում են, որ ծխախոտամոլության հետ միասին մեծ վտանգ է ներկայացնում նաև պասիվ ծխելն իր բազմաթիվ բացասական հետևանքներով, ներառյալ սրտանոթային հիվանդությունները, ուղեղի անոթային հիվանդությունները և քաղցկեղը [12]:

**Հետազոտության նպատակ:** Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել ծխախոտամոլության տարածվածությունը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի ուսանողների շրջանում և պարզել նրա դինամիկան ուսման ընթացքում:

**Հետազոտության խնդիրներն են.**

1. Պարզել ծխամոլության տարածվածությունը Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 1-ին և 4-րդ կուրսի ուսանողների շրջանում:

2.Իրականացնել ծխախոտամոլության տարածվածության համեմատական վերլուծություն 1-ին և 4-րդ կուրսի ուսանողների շրջանում:

**Հետազոտության մեթոդները և կազմակերպումը:** Հետազոտությունն իրականացվել է Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում՝ օգտագործելով մեր կողմից մշակված և արդեն իսկ մագիստրոսների շրջանում իրականացված հետազոտության հարցաշարի կարճ տարբերակը[10]: Հարցման մասնակիցներին ընտրելու համար պարտադիր պայման է հանդիսացել 2023-24 ուսումնական տարում Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի բակալավրիատի 1-ին կամ 4-րդ կուրսի ուսանող լինելը: Այս ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ որոշ ուսանողներ ունեն վատ կամ բավարար ինքնազգացողություն, որը տատանվում է

ուսման ընթացքում: Առանձին ուսումնասիրություններ նշում են, որ ուսանողների ամենավատ վիճակը հայտնաբերվել է առաջին և վերջին ուսումնական տարում [13]:

Հարցմանը մասնակցել է 235 ուսանող: Յուրաքանչյուր մասնակցի բացատրվել է հետազոտության նպատակները և մասնակցության կամավոր սկզբունքը:

Հարցաշարում ընդգրկած հարցերը խմբավորել ենք հետևյալ հիմնական երկու բաժիններում՝ Ընդհանուր տեղեկություններ, Ծխամոլություն: Իրականացվել է առերես հարցում հարցաթերթիկով: Բոլոր ցուցանիշները ներկայացվել են իրենց բացարձակ և հարաբերական հաճախականությամբ (թիվ և %):

**Հետազոտության արդյունքները և վերլուծություն:** Այս հետազոտության գլխավոր առանձնահատկությունն այն է, որ հարցման պահին բոլոր մասնակիցները գտնվել են ինստիտուտում և ընդգրկված են եղել տարբեր ուսումնական գործընթացներում (դասախոսություն, գործնական աշխատանք, քննություններ): Հարցվածների թվաքանակն ըստ տարիքային խմբերի, սեռի, կրթության մակարդակի (1-ին և 4-րդ կուրսեր), զբաղվածության և աշխատանքային ոլորտի, ընտանեկան կարգավիճակի ներկայացված են 1–ին աղյուսակում:

Ինչպես երևում է աղյուսակից, արական սեռի ուսանողներն առաջին կուրսում կազմում են ուսանողների 74.8 %–ը, սական նրանց թիվը պակասում է և չորրորդ կուրսում կազմում է ուսանողների թվի 65.1 %–ը: Բացատրություններից մեկը այն է, որ արական սեռի ուսանողների մի մասը բանակ մեկնելուց հետո չի շարունակում ուսումն ընտրած մասնագիտությամբ, իսկ մյուս մասը պարզապես թողնում է ինստիտուտը և չի շարունակում կրթությունը:

Ինչպես երևում է աղյուսակից, նախքան մասնագիտություն ձեռք բերելը, ուսանողներն անցնում են աշխատանքի, ապա նրանց մեծ մասը շարունակում է աշխատանքն ընտրած մասնագիտության կամ հարակից ոլորտում: Հարցվածների 14.1 %–ն (n=33) աշխատում են առողջապահական տարբեր հաստատություններում (հիվանդանոցներ, վերականգնողական կենտրոններ, առողջության առաջնային պահպանման կառույցներ (պոլիկլինիկա, առողջության կենտրոններ)) և ֆիթնես կետրոններում ու մարզասրահներում: Ընդ որում՝ 4–րդ կուրսի ուսանողների զբաղվածությունն այս բնագավառում բավականին մեծ է և կազմում է 27.7 % (n=31):

Համաձայն հետազոտության արդյունքների՝ ուսանողների 65.1 %–ը (n=153) չի աշխատում, ընդ որում՝ չաշխատողների թիվը բարձր է 1-ին կուրսում և կազմում է 78.2 % (n=96), իսկ 4-րդ կուսեցիների շրջանում չաշխատողների թիվը նվազում է և կազմում է 57.7 %–ը (n=57): Ուսանողների որոշ մասը նշում էին, որ այցելում են տարբեր մարզական և ֆիթնես ակումբներ, բուժհաստատություններ և իրականացնում են կամավորական աշխատանքներ, ձեռք են բերում մասնագիտական հմտություններ, իսկ որոշ ուսանողներ 4-րդ կուրսում սովորելու ընթացքում տարբեր կլինիկաներում անցնում են աշխատանքային փորձաշրջան:

Աղյուսակ 1

*Հետազոտության մասնակիցների նկարագրական բնութագրերը՝ ըստ կրթության մակարդակի (N = 235) :**

| Կրթության մակարդակ | 1–ին կուրս (N, %) | 4–րդ կուրս (N, %) | Միասին (N, %) |
|---|---|---|---|
| Տարիքային խմբեր | 123 | 112 | 235 |
| Մինչև 20 տարեկաններ | 102 (91 %) | 0 | 102 (43.4 %) |
| 20 տարեկանից մեծ | 21 (9 %) | 112 (100 %) | 133 (56.6 %) |
| Սեռը | | | |
| Արական | 92 (74.8 %) | 73 (65.1 %) | 165 (70.2 %) |
| Իգական | 31 (25.2 %) | 39 (34.9 %) | 70 (29.8 %) |
| Զբաղվածությունը և աշխատանքային ոլորտը | | | |
| Գյուղատնտեսություն | 2 (1.6 %) | 3 (2.9 %) | 5 (2.1 %) |
| Արդյունաբերություն, շինարարություն | 2 (1.6 %) | 2 (1.8 %) | 4 (1.7 %) |
| Գրասենյակային, մտավոր աշխատանք, ծառայություններ | 18 (14.6 %) | 17 (15.1%) | 35 (14.9 %) |
| Ինքնազբաղված | 3 (2.4 %) | 2 (1.8 %) | 5 (2.1 %) |
| Առողջապահական կամ ֆիթնես կենտրոն | 2 (1.6 %) | 31 (27.7 %) | 41 (17.4 %) |
| Չի աշխատում | 96 (78,2 %) | 57 (50.7 %) | 145 (61.8 %) |
| Ընտանեկան կարգավիճակ | | | |
| Ամուսնացած է կամ ունի մշտական զուգընկեր | 4 (3.2 %) | 6 (5.4 %) | 10 (4.3 %) |
| Ամուրի/չամուսնացած | 118 (95.9%) | 104 (92.7 %) | 222 (94.4 %) |
| Միայնակ/ամուսնալուծված | 1 (0.8 %) | 2 (1.9 %) | 3 (1.3 %) |

Ծխախոտամոլության տարածվածությունը ներկայացված է 2-րդ աղյուսակում: Ինչպես երևում է աղյուսակից, հարցվածների 23.4%–ը (n=55) ծխում է, ընդ որում՝ ծխում են առաջինկուրսեցիների 24.3 %–ը (n=30) և չորրորդկուրսեցիների 22.3 %–ը (n=25): Բավականին լավ ցուցանիշ է այն հանգամանքը, որ չի ծխում ուսանողների 76.6%–ը (n=180):

Հաջորդիվ ներկայացրել ենք ծխախոտամոլության տարածվածությունը՝ ըստ սեռի: Ինչպես երևում է աղյուսակից, 1-ին և 4-րդ կուրսերի ծխող արական սեռի ուսանողների միջև էական տարբերություն չկա և այն համապատասխանաբար կազմում է 28.2% (n=26) և 31.5% (n=23): Իգական սեռի ծխող ներկայացուցիչները կազմում են 8.6 %, սակայն առկա է էական տարբերություն 1-ին և 4-րդ կուրսերում ծխող ուսանողների միջև և այն համապատասխանաբար կազմում է 12.9% (n=4) և 5.1% (n=2): Այս արդյունքները վիճակագրորեն հավաստի են (P < 0.0001): Համաձայն աղյուսակի՝ 1-ին կուսում ծխում են 30 ուսանող և նրանց 86.3 %-ն արական սեռի ներկայացուցիչներ են, իսկ 4-րդ կուրսում ծխում են 25 ուսանող և արական սեռի ներկայացուցիչները կազմում են են 92 %:

Աղյուսակ 2

Ծխախոտամոլության տարածվածությունն ուսանողների շրջանում

| Ռիսկի գործոններ | Բոլորը n (%) | I-ին կուրս n (%) | IV-րդ կուրս n (%) | p |
|---|---|---|---|---|
| Ծխողներ | 55(23.4) | 30(24.3) | 25 (22.3) | - |
| Արական սեռ | 49(29.6) | 26(28.2) | 23(31.5) | P < 0.0001 |
| Իգական սեռ | 6(10.9) | 4(12.9) | 2 (5.1): | |
| Ծխելը սկսելու տարիք | | | | P < 0.001 |
| ա) Մինչև 17 տարեկան | 22 (40) | 20 (66.7) | 2 (8) | |
| բ) 18-22 տարեկան | 30 (54.5) | 10 (33.3) | 20 (80) | |
| գ) 23 և ավելի | 3 (5.5) | 0 | 3 (12) | |
| Ծխելը թողնելու ցակություն | 23 (41.9) | 16 (61.5): | 7 (28): | P >0.05 |
| Արական սեռ | 21 (40.8) | 14 (53.8) | 7 (30) | |
| Իգական սեռ | 2 (33) | 2 (50) | 0 | |
| Պասիվ ծխողներ | 93(39.6) | 41(33.3) | 52(46.6) | - |

Առանձին հարցով ուսումնասիրել ենք ծխելը սկսելու տարիքը ծխողների շրջանում և ստացել ենք բավականի հետաքրքիր տվյալներ, որոնք ներկայացված են 2–րդ աղյուսակում: Համաձայն աղյուսակի՝ հարցվածների 40 %–ը (n=22) որպես ծխելը սկսելու տարիք նշել է մինչև 17 տարեկան (մեծամասնությունը նշել է 15-17 տարեկան) ժամանակահատվածը, ընդ որում՝ 1-ին և 4-րդ կուսերի ուսանողների համար այն համապատասխանաբար կազմում է 66.7 % (n=20) և 8 % (n=2): Ըստ հետազոտության տվյալների՝ 54.5 % (n=30) դեպքերում որպես ծխելը սկսելու տարիք նշվել է 18-22 տարեկան ժամանակահատվածը, իսկ 5.5% (n=3) դեպքերում նշվել է ավելի մեծ տարիք: Այս արդյունքները վիճակագրորեն հավաստի են ($P < 0.001$): Ծխելը սկսելու տարիքը հատկապես կևոր է մեր հետազոտության համար, քանի որ այն ծխողների 54.5 % դեպքում ծխելը սկսելու տարիքը համընկնում է բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու տարիների հետ: Այս փաստը նաև հուշում է, որ այդ շրջանում կարելի է ավելի ակտիվ հակածխախոտային միջոցառումներ իրագործել և բուհերում ապահովել առողջությանը աջակցող միջավայր:

Առանձին հարցով ուսումնասիրել ենք ծխելը թողնելու ցանկությունը ծխողների շրջանում: Ինչպես երևում է աղյուսակից ծխողների 41.9% (n=23) ցանկանում է թողնել ծխելը, ընդ որում՝ ծխելը թողնելու ցանկությունը հատկապես մեծ է 1-ին կուրսի ուսանողների շրջանում և այն կազմում է 53.8 % (n=14): Հետազոտությամբ պարզել ենք նաև, որ 4-րդ կուրսում իգական սեռի և ոչ մի ծխող ներկայացուցիչ ցանկություն չունի թողնել ծխելը: Ծխողների շրջանում ծխելը թողնելու ցանկության վերաբերյալ ստացված տվյալները վիճակագրորեն հավաստի չեն ($P>0.05$): Պարզել ենք նաև, որ հարցվածների 27,2 %–ը (n=15) «համոզված չէ», որ ուզում է թողնել ծխելը»: Այսինքն՝ համապատասխան աշխատանքի և միջավայրի առկայության դեպքում ծխող ուսանողների թիվը կնվազի:

Հարցաշարանի մշակելիս՝ մենք առանձնացրել էինք պասիվ ծխելու երկու միջավայր՝ տուն և աշխատավայր, սակայն հետազոտության արդյունքների վերլուծությամբ պարզեցինք, որ քիչ են դեպքերը, երբ աշխատանքային միջավայրում ուսանողը պասիվ ծխող է, հետևաբար վերլուծության ընթացքում միջավայրին առանձնակի ուշադրություն չենք դարձրել և պասիվ ծխելու բոլոր դեպքերը դիտարկել ենք միասին:

Ինչպես երևում է աղյուսակից, հարցվածների 39.6 %–ը (n=93) համարվում են պասիվ ծխողներ, այն է՝ նրանց

բաշխվածությունն առաջին և չորրորդ կուրսերի ուսանողների համար համապատասխանաբար կազմում է 33.3 % (n=41) և 46.6 % (n=52): Համաձայն աղյուսակի ուսուցման՝ երկու կուրսերում էլ մեծ թիվ են կազմում պասիվ չծխողները, համապատասխանաբար առաջին և չորրորդ կուսերում՝ 66.7 % (n=82) և 53.6% (n=60), ինչը բավական դրական ցուցանիշ է հայկական իրականության համար: Հետազոտության պասիվ չխողների մեծ թիվը հուշում է ոչ միայն առողջության վրա ծխի բացասական ազդեցության նվազման մասին, այլև փաստում է, որ նվազել է ծխելը սկսելու միջավայրային գործոններից մեկը (ծխելու սովորությունը՝ տանը, երեխաների ներկայությամբ):

**Եզրակացություն:** Հետազոտության արդյունքում հանգել ենք հետևյալ եզրակացության.

1. Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի 1-ին և 4-րդ կուրսի ուսանողների շրջանում ծխախոտամոլությունը շարունակում է մնալ անհանգստացնող բարձր (ծխում է յուրաքանչյուր հինգերորդ ուսանողը), հատկապես, եթե հաշվի առնենք, որ գործ ունենք սպորտային ուղղվածությամբ բուհի հետ:

2. Ծխողների որոշակի խմբի մոտ ծխելը սկսելու տարիքը համընկնում է բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորելու տարիների հետ, ինչը կարևորում է հակածխախոտային ակտիվության և առողջ ապրելակերպի աջակցության ծրագրերի անհրաժեշտությունը ինստիտուտներում:

## 🕮 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


1. Աբովյան Վ., Նալբանդյան Գ., Ասցատրյան Գ., Ոչ վարակիչ հիվանդությունների ռիսկի գործոնների տարածվածությունը մագիստրոսների շրջանում, Գիտությունը սպորտում. արդի հիմնախնդիրներ, Գիտամեթոդական պարբերական, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, 2023, № 2 (9), 221 էջ:
2. Անդրեասյան Դ., Բազարչյան Ա., Մանուկյան Ս., Առողջապահության համակարգի գործունեության գնահատում, Հայաստան–2022, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, Երևան, 2022, 243 էջ:
3. Դավիդյանց Վ., Անդրեասյան Դ., Բադալյան Ա., Խանգելյան Ս., Կալիկյան Զ., Մանուկյան Ս., Առողջապահության համակարգի գործունեության գնահատում

2007 թ., STEPS ազգային հետազոտություն, Ազգային զեկույց, ՀՀ ԱՆ Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ, Երևան, 2008: https://nih.am/assets/pdf/atvk/hspa_2007_arm.pdf [մուտք՝ 11.10.24]

4. Եդոյան Լ., Լոքյան Ա., Աբովյան Վ., Ծխամոլությունը ուսանողության շրջանում, Բանբեր, գիտական աշխատություններ, Վանաձոր, 2008, Պ3:396-400:
5. Իկիլիկյան Հ., Երիտասարդության առողջության ձևավորման բժշկասոցիալական ասպեկտները (Երևան ք. բարձր դասարանցիներ, բժշկական քոլեջների և բուհերի ուսանողների օրինակով), Բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, ՀՀ ԱՆ ԱԱԻ, Երևան, 2007, 26 էջ:
6. Ծխախոտամոլության դեմ համամարդկային պայքար. Լուսաբաց հր. , Երևան, 2006, 16 էջ:
7. «Ծխախոտի իրացման, սպառման և օգտագործման սահմանափակումների մասին» Հայաստանի Հանրապետության, 2004 թվականի դեկտեմբերի 24-ի ՀՕ-72-Ն օրենք, Երևան, 2004:
8. Մարգարյան Ա., Ուսանող երիտասարդության ապրելակերպը, ԱՆ ԱԱԻ Առողջապահական տեղեկատվական վերլուծական հանրապետական կենտրոն, ՀՀ ԱԱՁ, 2007, 12 էջ:
9. Albadrani M.S., Tobaiqi M.A., Muaddi, M.A. *et al.* A global prevalence of electronic nicotine delivery systems (ENDS) use among students: a systematic review and meta-analysis of 4,189,145 subjects. *BMC Public Health* **24**, 3311 (2024). https://doi.org/10.1186/s12889-024-20858-2
10. Global health 2050: the path to halving premature death by mid-century, Jamison, Dean T et al.The Lancet, 2024, Volume 404, Issue 10462, 1561 – 1614 ,www.thelancet.com [մուտք՝ 10.12.24]
11. GBD 2019 Tobacco Collaborators. Spatial, temporal, and demographic patterns in prevalence of smoking tobacco use and attributable disease burden in 204 countries and territories, 1990-2019: a systematic analysis from the Global Burden of Disease Study 2019. Lancet. 2021 Jun 19;397(10292):2337-2360.
12. Center for Disease Control and Prevention (US) The health consequences of involuntary exposure to tobacco smoke. Available: https://www.ncbi.nlm.nih.gov/books/NBK44324/. [մուտք՝ 10.12.24]

13. Szepe, O., Meszaros, A. Assessing well-being of university students and evaluation of its determinants. *BMC Public Health* **24**, 2862 (2024). https://doi.org/10.1186/s12889-024-20287-1
14. World Health Organization. Tobacco . Fact sheet. 2023. Available online: https://www.who.int/news-room/fact-sheets/detail/tobacco (accessed on 03 October 2024)
15. World Health Organization. Noncommunicable Diseases. Fact sheet. 2022. Available online: https://www.who.int/news-room/fact-sheets/detail/noncommunicable-diseases [մուտք՝ 03.10.2024]

## SMOKING PREVALENCE AMONG STUDENTS

*V. A. Abovyan, G. L. Nalbandyan,*
Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia

## ABSTRACT

**Keywords:** Non-communicable disorders, tobacco addiction, passive smokers, student smokers, e-cigarettes, age of starting smoking.

**Research relevance**: Tobacco kills more than 8 million people annually, including about 1.3 million non-smokers exposed to secondhand smoke. About 80% of the world's 1.3 billion tobacco users live in low-income and middle-income families. In 2020, tobacco was used by 22.3% of the world's population, 36.7% of users were men and 7.8% were women. In Armenia, the number of men smoking in 2022 was 53.2%, which has not changed compared to 2016, when it was 53.4%. The same applies to women: in 2022 and 2016, the number of women who smoke daily was 2.0% and 2.3%, respectively.

**Research aim:** The purpose of the research is to study the prevalence of smoking addiction among students of the Armenian State Institute of Physical Culture and Sport, and to find out its dynamics during their studies.

**Research methods and organization:** The research was carried out at the Armenian State Institute of Physical Culture and Sport using an abbreviated version of the survey questionnaire developed by us and already carried out among Master's degree students.

**Research results and analysis:** 23.4% of respondents smoke (n=55), 24.3% of freshmen smoke (n=30), and 22.3% of fourth-year students smoke (n=25). A fairly good indicator is the fact that 76.6% of students (n=180) do not smoke. There is no significant difference between male students who smoke in the 1st and 4th years, but there is a significant difference between female students who smoke in the 1st and 4th years, and it is 12.9% and 5.1%, respectively. These results are statistically significant (P <0.0001).

**Conclusion**: As a result of the research, we came to the following conclusions:

1. Smoking among 1st and 4th year students of the Armenian State Institute of Physical Culture and Sports continues to be alarmingly high (one in five students smokes), especially considering that we are dealing with a sport institute.

2. For a certain group of smokers, the age of starting smoking coincides with the years of study in higher education institutions.

## РАСПРОСТРАНЕННОСТЬ КУРЕНИЯ СРЕДИ СТУДЕНТОВ ГИФКС-а

*В. А. Абовян, Г. Л. Налбандян,*
Государственный институт физической
культуры и спорта Армении, Ереван, Армения

## АННОТАЦИЯ

**Ключевые слова**. Неинфекционные заболевания, табачная зависимость, пассивные курильщики, курящие студенты, электронные сигареты, возраст начала курения.

**Актуальность исследования**. Табак убивает более 8 миллионов человек каждый год, в том числе около 1,3 миллиона некурящих, подвергающихся пассивному курению. Около 80% из 1,3 миллиардов потребителей табака в мире живут в семьях с низким и средним уровнем дохода. В 2020 году табак употребляли 22,3% населения мира, 36,7% мужчин и 7,8% женщин. В Армении число курящих мужчин в 2022 году составило 53,2%, что не изменилось по сравнению с 2016 годом, когда оно составляло 53,4%. То же самое касается и женщин: в 2022 и 2016 годах количество курящих каждый день женщин составляло 2,0% и 2,3% соответственно.

**Цель исследования.** Изучить распространенность курения среди студентов Государственного института физической культуры и спорта Армении и выяснить ее динамику во время учебы.

**Методы и организация исследования**. Исследование проводилось в Армянском государственном институте физической культуры и спорта с использованием сокращенной версии анкеты опроса, разработанной нами и уже проведенной среди магистрантов.

**Анализ результатов исследовании.** Курят 23,4% респондентов (n=55), среди студентов первого курса курят 24,3% (n=30), а среди студентов четвертого курса курят 22,3% (n=25). Достаточно хорошим показателем является тот факт, что 76,6% студентов (n=180) не курят. Существенной разницы между студентами мужского пола, курящими на 1-м и 4-м курсах, нет, но существует значительная разница между студентками, курящими на 1-м и 4-м курсах, и она составляет 12,9% и 5,1% соответственно. Эти результаты статистически значимы (P <0,0001).

**Краткие выводы.** В результате исследования мы пришли к следующим выводам:

1. Курение среди студентов 1 и 4 курсов Государственного института физической культуры и спорта Армении продолжает оставаться тревожно высоким (курит каждый пятый студент), особенно если учесть, что мы имеем дело со спортивным вузом.

2. У определенной группы курильщиков возраст начала курения совпадает с годами обучения в высших учебных заведениях.

### *Տեղեկություններ հեղինակների մասին*

Վարդան Արտավազդի Աբովյան՝ բ.գ.թ.., Ֆիզիկական վերականգնման ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: vardan.abovyan@sportedu.am,

Գևորգ Լևոնի Նալբանդյան՝ մ.գ.թ., Ֆիզիկական վերականգնման ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: gevorg.nalbandyan@sportedu.am

***Information about the autors***

Vardan Artavazd Abovyan, MD, PhD, Associate Professor of the Chair of Physical Rheabilitation, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail:vardan.abovyan@sportedu.am

Gevorg Levon Nalbandyan PhD, Associate Professor of the Chair of Physical Rheabilitation, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: gevorg.nalbandyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 26.01.2025–ին:
Ուղարկվել է գրախոսման՝ 28.01.2025–ին:
Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան